

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԴԵԿԱՆԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՅԱԿԱՐԳ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն ընթացակարգով սահմանվում է «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ հիմնադրամի (այսուհետ՝ Ինստիտուտ) ֆակուլտետի դեկանի (այսուհետ՝ դեկան) ընտրության և պաշտոնի նշանակման ընթացակարգը:
2. Սույն ընթացակարգի իրագործման իրավական հիմքերն են «Կրթության մասին», «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքները, այլ հարակից օրենքներ և ենթօրենսդրական ակտեր, ինչպես նաև Ինստիտուտի կանոնադրությունը:
3. Ֆակուլտետի դեկանի պաշտոնը համարվում է վարչական և գիտամանկավարժական ընտրովի պաշտոն: Ֆակուլտետի դեկանը չի կարող միաժամանակ զբաղեցնել երկու դեկավար կամ վարչական այլ պաշտոն Ինստիտուտում կամ այլ մասնագիտական ուսումնական հաստատությունում:
4. Ֆակուլտետի դեկավարումն իրականացվում է դեկանի կողմից, որը պետք է ունենա ֆակուլտետի ուղղվածությանը համապատասխան գիտական աստիճան: Նույն անձն իրավունք ունի այդ պաշտոնը զբաղեցնելու 5 տարի ժամկետով՝ ոչ ավելի, քան երկու անգամ անընդմեջ, այդ թվում ֆակուլտետի կառուցվածքային փոփոխության դեպքում: Դեկանը պաշտոնավարում է մինչև 65 տարին լրանալը:
5. Ֆակուլտետի գործունեությունը կազմակերպում և դեկավարում է դեկանն, իր իրավասությունների շրջանակում, ՀՀ օրենսդրությանը, Ինստիտուտի կանոնադրությանը, Ինստիտուտի ներքին իրավական ակտերին և ֆակուլտետի կանոնադրությանը համապատասխան:

2. Դեկանի պաշտոնի թեկնածուներին ներկայացվող պահանջները և առաջադրումը

5. Ֆակուլտետի դեկան կարող է ընտրվել այն պրոֆեսորը կամ դոցենտը, ով ունի գիտությունների դոկտորի կամ թեկնածուի գիտական աստիճան և առնվազն 5 տարվա գիտամանկավարժական աշխատանքային փորձ:
6. Դեկանի ընտրությունը նշանակվում է ռեկտորի հրամանով և ընտրությունից առնվազն 30 օր առաջ հրապարակվում է Ինստիտուտի կայք էջում:

7. Դեկանի թափուր պաշտոնի թեկնածուներն առաջադրվում են ֆակուլտետների, ամբիոնների, լաբորատորիաների կողմից կամ ինքնաառաջադրմամբ:
8. Թեկնածուների առաջադրումը դադարեցվում է ընտրությունից 15 օր առաջ:
9. Դեկանի պաշտոնի համար առաջադրած ամբիոնները կամ ինքնաառաջադրված թեկնածուները Մարդկային ռեսուրսների կառավարման և ընդհանուր բաժին են ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝
 - 1) ամբիոնների կամ լաբորատորիաների կողմից առաջադրվելու դեպքում՝ որոշումը, ինքնաառաջադրման դեպքում՝ ռեկտորին հասցեագրված դիմումը.
 - 2) առաջադրված թեկնածուների գրավոր համաձայնությունները"
 - 3) կադրերի հաշվառման անձնական թերթիկ.
 - 4) ինքնակենսագրություն (CV).
 - 5) բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթղթերի (վկայական, դիպլոմ, հավաստագիր և այլն) պատճեն(ներ)ը.
 - 6) գիտական աստիճան(ներ)ը և գիտական կոչում(ներ)ը հաստատող փաստաթղթերի պատճեն(ներ)ը.
 - 7) տպագրված գիտական, մեթոդական աշխատանքների կամ գյուտերի հաստատված ցանկը.
 - 8) պարգևների, մրցանակների և պատվավոր կոչումների վերաբերյալ տվյալներ, եթե առկա են.
 - 9) թեկնածուի՝ ֆակուլտետի զարգացման 5 տարվա ծրագիրը (հայեցակարգ):
10. Դեկանի թեկնածուների անձնական գործերը Ինստիտուտի ռեկտորը մակագրում է գիտական խորհրդի քարտուղարին:
11. Ինստիտուտի գիտական խորհրդի քարտուղարը փաստաթղթերի համապատասխանությունը ստուգելուց հետո Ինստիտուտի գիտական խորհրդի (Գիտական խորհուրդ) նիստից (այսուհետ՝ նիստ) առնվազն 5 կամ 10 աշխատանքային օր առաջ դեկանի պաշտոնի համար դիմում ներկայացրած անձանց ցուցակը հրապարակում է Ինստիտուտի կայքէջում և տեղեկացնում թեկնածուներին Գիտական խորհուրդի նիստի մասին: Հրապարակվող ցուցակի ձևը տրված է Հավելված 1-ում:
12. Դեկանի պաշտոնի համար առաջադրված կամ ինքնաառաջադրված թեկնածուները մինչև թեկնածուների մասին տեղեկությունները Ինստիտուտի կայքէջում պաշտոնապես տեղադրվելու օրը, իրավունք ունեն հետ վերցնել ներկայացված փաստաթղթերը և ինքնաբացարկ հայտնել՝ այդ մասին գրավոր դիմում ներկայացնելով ռեկտորին:

3. Գիտական խորհրդում դեկանի պաշտոնի թեկնածուների քննարկումը

13. Դեկանի ընտրության օրակարգով Ինստիտուտի գիտական խորհրդի բաց նիստը վարում է Գիտական խորհրդի նախագահը (Նախագահ):
Դեկանի ընտրության օրակարգով Գիտական խորհրդի բաց նիստին կարող են մասնակցել հրավիրված անձինք:
14. Նիստն իրավազոր է Գիտական խորհրդի կազմի առնվազն 2/3-ի ներկայության դեպքում:
15. Նիստում որոշումներն ընդունվում են նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ (կեսից ավելին), բաց քվեարկությամբ, եթե Գիտական խորհուրդն այլ կարգ չի սահմանում:
Գիտական խորհրդի անդամ դեկանի պաշտոնի թեկնածուները չեն կարող լինել հաշվիչ հանձնաժողովի անդամ, սակայն մասնակացում են քվեարկությանը:

16. Նախագահը հարցի քննարկումը սկսում է թեկնածուի (ների) առաջադրման գործընթացի վերաբերյալ տեղեկությունների տրամադրմամբ և ներկայացնում է թեկնածուների ցուցակը:
Առաջադրման գործընթացում սույն ընթացակարգի էական խախտումներ¹ ի հայտ գալու դեպքում Գիտական խորհուրդն իրավասու է հետաձգել նիստը 5 (հինգ) աշխատանքային օրով՝ մինչև խախտումների վերացումը:
17. Նիստին դեկանի թեկնածուների մասնակցությունը պարտադիր է: Դեկանի թեկնածուի բացակայության դեպքում վերջինիս հարցը հանվում է քննարկումից, բացառությամբ Գիտական խորհրդի կողմից հարգելի համարվող դեպքերի²: Հարգելի բացակայության դեպքում նիստը հետաձգվում է մինչև հարգելի համարվող դեպքերի ավարտի հաջորդ օրը:
18. Նախագահը ծրագրային ելույթի համար, ըստ ցուցակի, ձայնը տալիս է դեկանի թափուր պաշտոնի թեկնածուներին: Ելույթը տևում է 20-30 րոպե: Յուրաքանչյուր թեկնածուի ելույթից հետո Նախագահի առաջարկությամբ գիտական խորհրդի անդամները և հրավիրված անձինք կարող են հարցեր ուղղել թեկնածուին: Հարցերը սահմանափակվում են նախագահի առաջարկությամբ՝ գիտական խորհրդի որոշմամբ:
19. Թեկնածուների ծրագրային ելույթներից հետո սկսվում է թեկնածությունների քննարկումը:
20. Յուրաքանչյուր թեկնածության քննարկումը տևում է 5-10 րոպե:
21. Քննարկումների ավարտից հետո թեկնածուներին տրվում է լրացուցիչ ելույթի հնարավորություն մինչև 10 (տաս) րոպե տևողությամբ:

4. Գիտական խորհրդում դեկանի ընտրության անցկացումը

22. Դեկանի ընտրությունը Գիտական խորհրդի նիստում անցկացվում է փակ, գաղտնի քվեարկությամբ:
23. Փակ, գաղտնի քվեարկության համար ինքնաբացարկ չհայտնած թեկնածուների անուն, ազգանունները գրանցվում են քվեաթերթիկում (Հավելված 2):
24. Նախագահի առաջարկությամբ և Գիտական խորհրդի որոշմամբ Գիտական խորհրդի անդամներից ձևավորվում է երեք հոգուց կազմված հաշվիչ հանձնաժողովը: Հաշվիչ հանձնաժողովն իր կազմից ընտրում է նախագահ: Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:
25. Քվեաթերթիկում գրվում են մեկ թեկնածուի կամ թեկնածուների անուն, ազգանունները այբբենական կարգով:
26. Հաշվիչ հանձնաժողովն ընտրելու իրավունք ունեցող, նիստին ներկա Գիտական խորհրդի յուրաքանչյուր անդամին տալիս է մեկ քվեաթերթիկ: Քվեաթերթիկ ստացողը ստորագրում է Գիտական խորհրդի անվանացանկում:
27. Քվեարկության ավարտից հետո հաշվիչ հանձնաժողովն ամփոփում է քվեարկության արդյունքները և կազմում հաշվիչ հանձնաժողովի արձանագրություն (Հավելված 3): Արձանագրությունը ստորագրում են հանձնաժողովի բոլոր անդամները:
28. Վավեր են համարվում այն քվեաթերթիկները, որոնցում «կողմ» կամ «դեմ» սյուններում միայն մեկ թեկնածուի անվան դիմաց կատարված է «V» նշումը:
29. Անվավեր են համարվում այն քվեաթերթիկները, որոնցում կատարված են
 - 1) մեկից ավելի թեկնածուների անվան դիմաց «V» նշումը,
 - 2) քվեաթերթիկում չնախատեսված նշումներ:

30. Դեկանի պաշտոնում ընտրված է համարվում այն թեկնածուն, ով ստացել է Գիտական խորհրդի քվեարկության իրավունք ունեցող անդամների ձայների կեսից ավելին:
- Հաշվիչ հանձնաժողովի նախագահը հրապարակում է քվեարկության արդյունքները յուրաքանչյուր թեկնածուի համար առանձին, որից հետո Գիտական խորհուրդը հաստատում է հաշվիչ հանձնաժողովի արձանագրությունը:
31. Հաշվիչ հանձնաժողովի արձանագրության տվյալների հրապարակման արդյունքում Գիտական խորհուրդը կայացնում է հետևյալ որոշումներից մեկը՝
- 1) ֆակուլտետի դեկան ընտրելու մասին,
 - 2) կրկնակի քվեարկություն անցկացնելու մասին,
 - 3) ընտրությունները չկայացած ճանաչելու մասին,
 - 4) ընտրություններն անվավեր ճանաչելու մասին:
32. Մեկից ավելի թեկնածուների դեպքում որևէ թեկնածուի օգտին Գիտական խորհրդի քվեարկության իրավունք ունեցող նիստին ներկա անդամների ձայների կեսից ավելին չհավաքելու դեպքում Գիտական խորհրդի նույն նիստում կազմակերպվում է կրկնակի քվեարկություն, որին մասնակցում են՝
- 1) առավելագույն ձայներ ստացած առաջին երկու թեկնածուն, կամ
 - 2) առավելագույն ձայներ ստացած առաջին թեկնածուն և առավել ձայներ ստացած երկրորդ և հաջորդ թեկնածուները, կամ
 - 3) հավասար առավելագույն ձայներ ստացած երկու և ավելի թեկնածուները:
33. Կրկնակի քվեարկությունը կազմակերպվում է սույն ընթացակազմին համապատասխան: Կրկնակի քվեարկության դեպքում ընտրված է համարվում այն թեկնածուն, ով հավաքել է Գիտական խորհրդի քվեարկության իրավունք ունեցող և նիստին ներկա անդամների ձայների կեսից ավելին:
34. Դեկանի ընտրություն(ներ)ը համարվում են չկայացած, եթե
- 1) դեկանի պաշտոնի միակ թեկնածուն չի ստացել Գիտական խորհրդի նիստին ներկա քվեարկության իրավունք ունեցող անդամների ձայների կեսից ավելին,
 - 2) կրկնակի քվեարկության արդյունքով որևէ թեկնածու չի ստացել Գիտական խորհրդի նիստին ներկա քվեարկության իրավունք ունեցող անդամների ձայների կեսից ավելին:

5. Դեկանի պաշտոնում հրամանագրելու կարգը

35. Ռեկտորը դեկանի պաշտոնում ընտրված անձի հետ կնքում է աշխատանքային պայմանագիր՝ 5 տարի ժամկետով՝ Գիտական խորհրդի որոշումը հաստատվելուց հետո:
36. Ֆակուլտետի դեկանի լիազորությունները վաղաժամկետ դադարեցվում են.
- 1) Ինստիտուտի կառուցվածքային փոփոխության դեպքում, երբ ֆակուլտետը լուծարվում է կամ վերակազմակերպվում,
 - 2) մահվան դեպքում,
 - 3) իր դիմումի համաձայն,
 - 4) կարգապահական պատասխանատվության ենթարկվելու դեպքում:
 - 5) 36-րդ կետում սահմանված, ինչպես նաև դեկանի պաշտոնի թեկնածուության բացակայության, ընտրությունը չկայանալու կամ անվավեր ճանաչվելու դեպքերում ռեկտորն իրավասու է մինչև 6 ամիս ժամկետով դեկանի պաշտոնում նշանակել դեկանի ժամանակավոր պաշտոնակատար, ով բավարարում է սույն ընթացակարգի 5-րդ կետով դեկանի թեկնածուին ներկայացվող պահանջները:

6. Եզրափակիչ դրույթներ

37. Սույն ընթացակարգն ուժի մեջ է մտնում Գիտական խորհրդի հաստատումից անմիջապես հետո:
38. Սույն ընթացակարգում կատարվող լրացումներն ու փոփոխությունները, հավելվածները համարվում են սույն ընթացակարգի անբաժանելի մասը:
39. Սույն ընթացակարգով ուժը կորցրած ճանաչել Ինստիտուտի. Գիտական խորհրդի 2012թ. հունվարի 31-ի նիստին հաստատված «Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտ» հիմնադրամի ղեկանի ընտրության ընթացակարգը:

Հավելված 1.

Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի _____ ֆակուլտետի դեկանի պաշտոնի թեկնածուների ցուցակ					
Հ / Հ	Անուն, ազգանուն	Գիտական աստիճան, կոչում	Պաշտոն	Առաջադրող ստորաբաժանում	Ինքն առաջ ադրու մ
1					
2					
3					

Հավելված 2.

ՔՎԵԱԹԵՐԹԻԿ

Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի Գիտական
 խորհրդի _____
ամսաթիվ, նիստի համար
 նիստում դեկանի փակ, գաղտնի քվեարկության

Հ/Հ	Թեկնածուի անուն, ազգանուն	Ֆակուլտետ	Կողմ	Դեմ
1				
2				

«Կողմ» կամ «դեմ» լինելու դեպքում թեկնածուի անվան դիմաց քվեաթերթիկի
 համապատասխան վանդակում կատարվում է «V» նշումը:

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
Հաշվիչ հանձնաժողովի նիստի

ք. Երևան

« » _____, 20__թ.

Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի
_____ Գիտական խորհրդի _____

նիստում հաշվիչ հանձնաժողովն ընտրվել է հետևյալ կազմով՝

1. _____
2. _____
3. _____:

Գիտական խորհրդի _____ անդամներից նիստին ներկա էին _____ հոգի:

Քննարկվել է (են) _____ ֆակուլտետի դեկանի
թափուր պաշտոնի թեկնածությունը (ները):

Քվեարկությանը մասնակցել են Գիտական խորհրդի _____ անդամներ:

Բաժանվել է _____ քվեաթերթիկ:

Քվեատուփում առկա է _____ քվեաթերթիկ:

Քվեարկության արդյունքներն են՝

Հ/Հ	ԹԵԿՆԱԾՈՒ(ՆԵՐԻ) ԱԶԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆ	ԿՈՂՄ	ԴԵՄ	ԱՆՎԱԿԵՐ

Անվավեր քվեաթերթիկների քանակը՝ _____:

1. Փակ, գաղտնի քվեարկության արդյունքներով _____
ընտրվել է (չի ընտրվել) _____ ֆակուլտետի
դեկանի պաշտոնում:

2. Փակ, գաղտնի քվեարկության արդյունքներով _____
ֆակուլտետի դեկանի պաշտոնի թեկնածուներից ոչ մեկը չի ընտրվում դեկանի
պաշտոնում, իսկ ներքոնշյալ թեկնածուները՝

- 1) _____,
- 2) _____,
- 3) _____

մասնակցում են կրկնակի քվեարկությանը:

3. Փակ, գաղտնի քվեարկության արդյունքներով _____
ֆակուլտետի _____ դեկանի _____ պաշտոնի _____ թեկնածու
_____ չի ստացել Գիտական խորհրդի նիստին
ներկա քվեարկության իրավունք ունեցող անդամների ձայների կեսից ավելին
կամ կրկնակի քվեարկության արդյունքով թեկնածուները՝

- 1) _____
- 2) _____
- 3) _____

չեն ստացել Գիտական խորհրդի նիստին ներկա քվեարկության իրավունք ունեցող
անդամների ձայների կեսից ավելին:

Ընտրությունը համարել չկայացած:

Հաշվիչ հանձնաժողովի նախագահ՝ _____

Հաշվիչ հանձնաժողովի անդամներ՝ _____

1. **Ընթացակարգի էական խախտումներ են՝** կեղծ փաստաթղթեր ներկայացնելը, դիմելու սահմանված ժամկետները
խախտելը:

2. **Հարգելի են համարվում** դժբախտ պատահարները, պետական, հասարակական, զինվորական պարտականությունները
կատարելը: